

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 1000 ՈՐՈՇՄԱՆ ԿԻՐԱՌՈՒՄԸ
ՀՀ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ**

2014 թվականի հուլիսի 04-ին ընդունվել է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-78 ՀՀ օրենքը, որն ուժի մեջ է մտել 26.07.2014թ.: Սույն օրենքով նախատեսված որոշ իրավախախտումների դիմաց տուգանքի չափերը նվազել են, սակայն ՀՀ ճանապարհային ոստիկանությունը (այսուհետ՝ ՃՈ) մինչև 2014 թվականի հուլիսի 26-ը կատարած իրավախախտումների վերաբերյալ անձանց վարչական պատասխանատվության ենթարկելիս կիրառում է ավելի անբարենպաստ օրենք՝ նախկին օրենքը, իսկ անձի իրավական վիճակը բարելավող ՀՕ-78 ՀՀ օրենքը չի կիրառում:

ՃՈ-ն քաղաքացիների կողմից ներկայացված բողոքների մերժումը պատճառաբանում է՝ հղում կատարելով ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի 4-րդ մասին, համաձայն որի՝ «Անձի իրավական վիճակը բարելավող, նրա պատասխանատվությունը վերացնող կամ մեղմացնող իրավական ակտերը հետադարձ ուժ ունեն, եթե դա նախատեսված է այդ ակտերով»: ՃՈ-ն պատճառաբանում է, որ ՀՕ 78-ն ՀՀ օրենքը հետադարձ ուժ չի նախատեսել, հետևաբար չի տարածվում այդ ակտի ուժի մեջ մտնելուց առաջ կատարված իրավախախտումների վրա: ՃՈ-ն իր մերժումները պատճառաբանում է նաև՝ հղում կատարելով ՀՀ Սահմանադրական դատարանի 29.11.2011թ. ՍԴՕ 1000 որոշմանը, որով ՀՀ սահմանադրության 42-րդ հոդվածի 4-րդ մասին հակասող է ճանաչվել «Իրավական ակտերի մասին» ՀՀ Օրենքի 78-րդ հոդվածի 2-րդ մասը, համաձայն որի՝ «Իրավախախտման համար սահմանված պատասխանատվությունը վերացնող կամ մեղմացնող կամ իրավախախտում կատարած իրավաբանական և ֆիզիկական անձանց դրությունն այլ կերպ բարելավող իրավական ակտը տարածվում է մինչև դրա ուժի մեջ մտնելը ծագած հարաբերությունների վրա, այսինքն՝ ունի հետադարձ ուժ, եթե օրենքով կամ այդ իրավական ակտով այլ բան նախատեսված չէ»:

Թիվ ՍԴՈ-1000 որոշման մեջ ասվում է, որ «ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի 4-րդ մասում ամրագրված նորմն ունի անմիջական գործողություն և, ըստ այդմ, եթե ճյուղային օրենսդրությունը չի նախատեսում համապատասխան նորմ, որը սահմանում է տվյալ օրենսդրության՝ ժամանակի մեջ գործողության կանոնները կամ բովանդակում է նշված սահմանադրական նորմին հակասող նորմեր, ապա կիրառվում է նշված սահմանադրական նորմը՝ իր անմիջական գործողության ուժով՝ համաձայն ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի»:

Այսինքն, ՃՈ-ն ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված «այդ ակտեր» հասկացության տակ նկատի է ունենում

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ 78-ն ՀՀ օրենքը, այլ ոչ թե Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրքը: Օրենսգրքի 8-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ «Վարչական իրավախախտումների համար պատասխանատվությունը մեղմացնող կամ վերացնող ակտերը հետադարձ ուժ ունեն, այսինքն՝ տարածվում են նաև այդ ակտերի հրատարակումից առաջ կատարված իրավախախտումների վրա»:

Հետևաբար, միանշանակ է, որ ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված «այդ ակտեր» հասկացությունը ներառում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրքը, քանի որ օրենսգիրքը հանդիսանում է վարչական պատասխանատվություն սահմանող իրավական ակտ, ուստի ՀՕ 78-ն ՀՀ օրենքի դրույթները հետադարձ ուժ պետք է ունենան և կիրառվեն նախկինում կայացրած որոշումների նկատմամբ:

Տաթևիկ Շալջյան

*ՀՀ փաստաբանների պալատի
երիտասարդական խորհուրդ*